

պիտի հանգիստ վիճակ մը գտնէք, ու
յաւիտեան աշխարհս պիտի վայելէք .
դուք հիմա նայեցէք որ աղէկ կարգի
դնէք, ու հանգիստ վայելէք : || 5 ,
սուտ յոյս . գիտցէք որ մեռնողն ալ ատե-
նօք ձեզի պէս վայելքի յոյսերով լցուած
երիտասարդ մըն էր, շտկեմ, վայելէմ
ըսելու չմնաց կարծ կեանք մըն էր գլո-
րեցաւ, անցաւ, լմբնցաւ . մի կարծէք
թէ դուք անկէ երկար պիտի ապրիք :

(ՄՆԱՑԱԽ ՈՒՐԻԾ ԱԿԴԱՄ)

ԲԱԵԼՍԻՐԱԿԱԽՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՏՐԱՅԻ ՄԷՋ ԱՌԱԽՈՏ ՄԸ

ԿԱՄ

ՊԵՏՎԱՇՈՂԱԿԱԽՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԿՈՒԾԱԽ
ԸՆԿԵՐԱԿԱԽՆՈՒԹԻՒՆ :

“ | Կաջնուք հիմա ուրիշ գլուխ մը
կարդալու, որուն մէջ պիտի տեսնաս
կրօնական, մարդասիրական և բարոյա-
կան սկզբամբ հաստատուած ընկերու-
թիւններ, ժողովրդեան մոլութիւննե-
րուն, ցրաւորութիւններուն ու հիւան-
դութիւններուն առջեն առնելու հա-
մար : Իսաւական կը համարիմ միայն ա-
նոնց անունը քեզի կարդալ . տարակոյս
չունիմ, որ այս բարեպաշտական ըն-
կերութիւններուն անունները միայն
կարգաւ լսես, կը նաև մակաբերել թէ
ինչ մանրամասն գործնական խնամքներ,
և որչափ շատ ու տեսակ տեսակ նիւ-
թական ու բարոյական նպաստներ ընե-
լու նպատակով հաստատուած են | ոն-
տրայի մէջ այս կամաւոր ընկերութիւն-
ները : | Այս սահմանադրութիւններուն
ամէնն ալ այս դարուն գործն են, և ա-
ւելի այս վերջի մէկ քանի տարիներուն,
որ խրատներով ու խոհեմութեան օրի-
նակներով լեցուն են : | Այս ընկերու-
թիւններուն տարուէ տարի ժողված
կամաւոր տուբքերը, միայն ստակ ըլլա-

լով, յիսուն միլիոնը կ'անցնին, առանց
գործով նպաստները հաշուելու : | 5 ա
ասոնց անունները :

“ | Նկերութիւն՝ մարդոց կեանքը ա-
մէն տեսակ պատահարներէ պահպանե-
լու, այսինքն ջրէ, կրակէ, և ուրիշ
ասոնց նման վտանգներէ :

“ | Նկերութիւն՝ յանկարծ հրդեհի
մէջ գտնուող անձանց կեանքը ազատե-
լու համար :

“ | Նկերութիւն՝ կենդաննեաց չարա-
ցար գործածուելուն դէմ, որով մարդիկ
վայրագ ու կատաղի կ'ըլլան, և խեղձ
կենդանիները որ մեր կենաց օժանդակ-
ներն են, պատժաւորներու պէս կը գոր-
ծածուին մեզի ըրած օգտակար ծա-
ռայութիւններնուն փոխարէն :

“ | Նկերութիւն՝ երկրագործաց վի-
ճակը լաւցրնելու համար :

“ | Նկերութիւն՝ գործաւորաց կար-
գերուն մէջ ուսումն տարածելու հա-
մար :

“ | Նկերութիւն՝ | ոնտրայի ժողո-
վարդեան առողջութեան վիճակը լաւ-
ցընելու համար :

“ | Նկերութիւն՝ ժողովրդեան մէջ
մաքրութեան խնամք տարածելու հա-
մար, | ոնտրայի բազմամարդ ու աղքատ
թաղերուն մէջ ձրի կամ խիստ վար
գնով բազնետուններ բանալով, ուր լը-
ւացարաններ ու լաթ չորցրնելու համար
տաք տեղեր ալ կան, որպէս զի աղքատ
կնիկներն ու փոխելու կտաւիք չունե-
ցող մարդիկ կարենան ձրի կամ մէկ եր-
կու պղինձ տալով լուացուիլ, և իրենց
կամ իրենց ընտանեաց կտաւիքը լուալ
ու չորցրնել :

“ | Նկերութիւն՝ գործաւորաց և մանր
մունք բան ծախող խանութպաններուն
դիւրութիւն տալու համար, որ կարե-
նան իրենց գործարանները կամ խա-
նութները կանուխ գոցել ու իրիկուան
ժամերը օգտակար գլքեր կարդալով և
ընտանեկան պարապմունքներով անցը-
նել, որ իրենց վարուցն ալ առողջու-
թեանն ալ միանգամայն օգտակար է :

„ Ինկերութիւն բարեխառնութեան կամ զինէչատից, որուն նպատակն է՝ ժողովրդեան մէջէն ոգելից ըմպելիքներու չափազանց ու գէշ սովորութիւնը վերցընել, և հետեւ աբար՝ զինեմոլութենէ առաջ եկած թշուառութիւններն ու մտաց ապշութիւնները խափանել: Այս ընկերութեան անդամները, ժողովրդեան օրինակ ըլլալու համար, իրենք ալ զինի և գարեջուր խմելէ կը հրաժարին, և կամաւյանձն կ'առնեն ինք զինքնին զրկելը:

„ Ինկերութիւն՝ մոլութիւնները ջըն ջելու համար, սրաւն հիմնադիրն եղաւ Ռւիլըրֆօրս, սևամորթներուն ազատարար: Այս ընկերութիւնը մեծ գումարներ ծախս կ'ընէ, Ո՞եծին Ռիտանիոյ թէ հարուստ և թէ աղքատ ժողովրդեան մէջ բարոյականութիւն և կրօնից հոգի տարածելու գրքեր հրատարակելով:

„ Ա երջապէս, ընկերութիւններ՝ Ինգղիոյ մէջ ապրուստ զգմնող աղքատ ընտանիքները մեր գաղթական երկիրները զրկելու և գլխաւորապէս Իչողրալիա: Դեռ ութը օր չկայ, որ մեր գործաւոր ժողովրդեան մեծկակ կարաւան մը ճամփայ ելաւ բազմաթիւ նաւերով, բոլոր Լոնսորայի ժողովրդեան ազքին առջելը, որ բարձրածայն աղաղակներով իրենց ուրախակցութիւնը կը յայտնէին: Այս կարաւանները չէ թէ առջններուն պէս Լուրոպայի զիրտը, մոլութիւնը և անէծքը կոյր զկուրայն օտար ծովեզերքներու վրայ սերմաններու պէս՝ դատապարտեաներ, աքսորեալներ, դատարկաշրջիկներ, եղեռնաւորներ կը տանին, այլ ամբողջութիւն մը, կամ թէ ըսենք Ինգղիոյ մէկ մասը իր արուեստներովը, կրօնքովը կամ կրօնքներովը, օրէնքներովը, սահմանադրութիւններովը, քահանայններովը, օրէնսգէտներովը, արուեստագէտներովը և մինչեւ իր ազնուականներովը. որովհետեւ Ո՞եծին Ռիտանիոյ ամենէն մեծ գերդաստաններուն կրտսեր որդիքը նաւ կը նստին իրենց զրամագլուխներովը և իրենց ձեռքին տակը գտնուողներովը

այս անգղիական մանր ժողովուրդներուն հետ, որ երթան երկրորդ հայրենիք մը հաստատեն ուր տեղ որ առատ հող կայ, և ուր անգղիացին Ինգղիոյ բուն պատկերը կը գտնայ նաւեն իջած ատենը: Այս ալ ընկերականութիւն չէ, և տիեզերական ընկերականութիւն մը. որովհետեւ այս գաղթականութիւնները՝ Ինգղիոյ ժողովրդեան նեղ սահմանէն մեծամեծ հատուածներ պիտի տանին բնակեցընեն՝ Կոր Հոլանտայի ընդարձակ սահմաններուն մէջ,,:

Հին ժամանակի տեղափոխութիւններէն՝ ի վեր, որ աշխարհակալութեան պատերազմներուն երեսէն կը պատճառէր, բնաւ չէր տեսնուած ասանկ ընկերական միաբանութեան հոգիէն առաջնորդեալ ընկերական տեղափոխութիւններ:

Պաղեր մնացեր էի երբոր առաջնորդս զիրքը նորէն բացաւ ու ըսաւ. — “ Ի՞սառիշ գլուխ մ’ալ, որ հոգւոյ թշուառութիւններուն, բարոյական փրկութեանց, յանցաւորաց ուղղութեան և սխալանաց մէջ ինկողններն իրենց առջի վիճակը գարձնելու համար հաստատուած ընկերութեանց վրայ է :

„ Ինկերութիւն՝ դատապարտեալ մարդոց և անառակութեամբ կորսուած կանանց զաւկըններուն բարոյական ու կրօնական խնամակալութեանը համար:

„ Ինկերութիւն՝ անբաւ դրամագլուխներով՝ անհարազատ տղոց դաստիարակութիւն տալու, անոնք ապրեցնելու ու տեղաւորելու համար:

„ Ինկերութիւն՝ կասկածելի տուներէ զուրս ձգուած կամ ախտաւոր կը նիկները ժողովելու համար :

„ Ինկերութիւն՝ ճամբէ ելած կնիկներն ուղղելու համար :

„ Ինկերութիւն՝ ապաստանարան տալու համար անանկ կանանց, որոնք սխալանքի մէջ ինկած ըլլալով՝ կանոնաւոր կենաց և կրօնապահութեան դաւնալու կը փափաքին:

„ Ինկերութիւն՝ պալարեկելու այն կնիկներն ու աղջիկները, որոնք իրենց տարիքին կամ չքաւորութեան համար

մոլութեան որոգայթներն իյնալու առ-
թի մէջ կը գտնուին :

„ Ինկերութիւն՝ անառակութեան
տուները վերցընելու համար :

„ Ինկերութիւն՝ առաքինի կանանց
և տեղ չունեցող աղախնայց տեղ և
գործ գտնալու համար :

„ Ինկերութիւն՝ դարձի եկող կա-
նանց արհեստ և իրենց կրօնքը սորվե-
ցընելու համար :

„ Ինկերութիւն՝ օրինաց կողմէն ձրի
պաշտպանութիւն գտնալու անանկ կա-
նանց համար, որ կը հալածուին կամ
նեղութիւն կը քաշեն իրենց վրայ չա-
փազանց իշխանութիւն բանեցընողնե-
րէն :

„ Ինկերութիւն՝ պատժական յան-
ցանաց պատճառով բանտարկեալ տղոց
ձրի բան սորվեցընելու համար :

„ Ինկերութիւն՝ ուսման և բարե-
սպաշտութեան միջոցով եղեռնագործու-
թիւնը վերցընելու ժողովրդեան այն
կարգերուն մէջէն, որ աւելի վարժած
են եղեռնագործութեան :

„ Ինկերութիւն՝ բանտերը աղէկ
կերպով կարգադրելու, և ստակ ժող-
վելով՝ իրատական բանտեր և աշխա-
տութեան տուներ շինելու համար :

„ Հինգ կամ վեց ընկերութիւն՝ բան-
տարկեալ կանանց բարքը ուղղելու հա-
մար :

„ Ինկերութիւն՝ առաջին յանցան-
քով սպատժուած անձինքը վաստըկելու
երբոր պատիժնին կը լմըննայ, որ նորէն
յանցանքի մէջ չի յնան, և զանոնք բա-
րի վարուց և աշխատասիրութեան ձամ-
բան մոցընելու համար :

„ Ինկերութիւն՝ մուրացկանութե-
առջելը առնելու համար, երագ և շա-
րունակ օգնութիւն ընելով այն վիճա-
կին մէջ իյնալու մարդոց :

„ Ինկերութիւն՝ ամէն թէմի և թա-
ղի չքաւոր ընտանեաց կանոնաւոր կեր-
պով այցելութիւն ընելու համար :

„ Ինկերութիւն՝ քննելու և տեղե-
կութիւն տալու այն անձանց համար,
որ նամակներով ողորմութիւն կ'ուզեն
ասկէ անկէ :

„ Ինկերութիւն՝ պառկելու տեղ
չունեցող և ձմեռը առանց կրակի մնա-
ցող անձանց պառկելու տեղ տալու հա-
մար :

„ Ինկերութիւն՝ ննջարաններ ու ա-
ժան խոհանոցներ պատրաստելու ա-
նանկ գործաւորաց համար, որ քիչ մը
ատեն առանց բնակարանի կը մնան :

„ Ինկերութիւն՝ կարելի եղածին
չափ աժան և առանց ծախողին շահուն
հաց ու ածուխ ձարելու | ընտրայի ա-
մէն թաղերուն մէջ գտնուող աղքատ
գործաւորաց ընտանիքներուն համար :

„ Ինկերութիւն՝ անօթութենէ տը-
կարացեալներուն պարարտ ապուր տա-
լու համար :

„ Ինկերութիւն՝ մինտոելու ու այ-
ցելութիւն ընելու ամէն կրօնքէ և ա-
մէն երկրէ եղած օտարականներուն, որ
նեղութեան կամ խեղձութեան մէջ
ինկած ատեննին օգնութիւն ընեն ա-
նոնց :

„ Ինկերութիւն՝ ժողովրդեան սուրբ
գիրք կարգալու համար :

„ Դքատաց այցելութեան երթա-
լու համար :

„ Ինապաւէն ու չքաւոր այրիներուն
համար :

„ Պարտքի համար բանտն ինկած-
ներու համար :

„ Ինկար կամ խեղցեալնաւաստի-
ներուն տեղ գտնելու համար :

„ Պարապ մնացած նաւատիններու
տեղ գտնելու համար :

„ Ձկնորսներուն ու ծովուն երեսը
ապրողներուն օգնելու, զանոնք կերա-
կելու և անոնց ապրուստ տալու հա-
մար :

„ Տեղ չունեցող սկսվուացի արհես-
տաւորաց համար :

„ Լարօտութեան մէջ ինկող ձանա-
պարհորդաց համար :

„ () գնութեան կարօտութիւն ու-
նեցող գաղղիացւոց համար, ինչ կրօն-
քէ որ ըլլան :

„ Լեհացւոց համար :

„ Ինդհանուր մարդասիրութիւն քա-
ռոզելու համար :

„ Հրեից թշուառ վիճակը սփոփելու համար :

„ Պարծ չունեցող աղքատաց հաստատուն գործ գտնելու համար :

„ Լողովրդեան գործաւոր մասին բնական և բարոյական վիճակը լաւցընելու համար :

„ Տեղափոխութիւնները դիւրացընելու համար :

„ Կանանց ասեղի վերաբերեալ և տան աշխատութիւներ ձարելու համար :

„ Լոնտրայի մէջ նորահասակ աղախիններու տեղ գտնելու համար :

„ Վպասաւոր փնտուղներուն տեղեկութիւն տալու համար անանկ սպասաւորներու վրայ , որ իրաւ կամ սուտ վկայականներ կը պտըտցընեն հետերնին , և թէ որ անոնց ուղղութեանն ու լաւութեանը գէմ զրպարտութիւններ կան , ծմարիտը յայտնելով անոնց անունը շակելու համար :

„ Պարծաւորաց անգործ եղած ատենը՝ պէտք եղածին շափ ստակ փոխ տալու համար որ ապրին :

„ Պարծաւորաց խնայութեամբ ժողվածները հաւաքելու և անոնք ապահովութեամբ շահեցընելու համար :

„ Խիստ աժան շահօվ փոխատուութեան տուններ հաստատելու համար :

„ Կոյրերը կրթելու և անոնք աստուածային պաշտօնի տաննելու համար :

„ Լոմէն հասակէ խուլերու և համրերու համար :

„ Երեք երես լեցուն ողորմածական ընկերութիւններ :

„ Բնդհանուր ընկերակցութիւն բոլոր արուեստաւորաց , որ մէկ մէկ քիչքան տալով ամէն արհեստի աղքատներուն օգնութիւն ընեն :

„ Խնամատուններ ծերոց համար , ամէն տեսակ հիւանդութիւններու , զքաւորութիւններու և վշտակրութեց համար , որ հաստատուած են թեմերուն , մասնաւոր անձանց , մեծամեծ ուսումնարամներուն և կառավարութեծեռքովը „ : Տասուիրեք երես լեցուցեր էր միայն աս հասարակաց ողորմածութիւններուն ցուցակը :

„ Ա Երջապէս , աղքատաց տուրք ըստած անհուն գանձը , ուր ժողովը գեան տառապեալ կարգաց օգնելու համար , տարին երեք հարիւր միլիոնի մօտ կը ժողովուի ժողովրդեան բարեկեաց մասերէն :

„ Ի՞չ Ո'նեծին Ռդիտանիոյ տասանորդը „ :

(ԳՏՑ ՀԱՐՈՒՆՅԱՆԻ)

ԱԾԽԱՐՀԱԴՐՈՒԹԻՒՆ

Բեկուի Չոկ-մատու տաձարը :

ՌէԿՈՒ կամ Ռակու քաղաքը որ հիմա Պիրմանի թագաւորութեան տակնէ , ատեն մը զատ թագաւորութեան մը մայրաքաղաքն էր , մեծութեամբը և շնչքերուն աղուորութեամբն ալ շատ անուսնի . 1737ին Ալմալրա անունով պիրմանցի զօրավարը տիրեց այս քաղաքիս , շնչքերը կործանեց , բնակչաց ալ կէսը ցրուեց՝ կէսն ալ գերի տարաւ : Քաղթին շնչքերուն մէջ միայն տաձարներուն չէր դպած , բայց 1790ին քաղաքը նորոգուելէն վերջն ալ այս տաձարները երեսի վրայ մնացին , բացի Սու-Ռատու կամ Ասկեղէն աստուծոյ ըստած տաձարը որ Ռէկուացւոց մեծ ուխտատեղին ըլլալով՝ կանգուն մնացած է մինչև հիմա :

Լոյս տաձարս որ Ճարտարապետական ձեռյն , հնութեանը և գեղեցիութեանը համար շատ անուսնի է՝ և Ասիոյ ամենէն հին շնչքերէն մէկը կը կարծուի , զուգահեռական ձեռվ երկույարկ է , որոնցմէ առջինը 10 , երկրորդն ալ 20 անգղիական ոտք բարձր են : Այսորին յարկը կողմնակի 1391 ոտք երկայնութիւն ունի , վերինն ալ 684 ոտք : Լոյս յարկերը քարե աստիճաններով կելլըցուի , երկրորդյատակին վրայ ելլելու սանդուիններուն երկու կողմը երկու մեծ քարե առիւծներ փորուած են : Տաճարին չորս բոլորը քուրմերուն բնակարաններն են գետնէն 4 կամ 5 ոտք